1982 թ. Վարդան Թօվմայանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ մի ցուցահանդես, որը կոչվում էր «Հեփենինգ»: Վարդան Թօվմայանը ցուցադրում էր իր և լա Զակոնետի արված բանդակները, Ջիին՝ ֆրանսիական ինֆորմելի ազդեցությամբ արված «Էկրանները», Վիգեն Թաղմոսյանը՝ մի հսկայական փուչիկ, իմ կուրսեցի Գագիկ Վարդանյանը՝ և լա Փարաջանով մի կոլաժ: Դատկաղես հրաշալի էր լորես Բելամուկին, ով բարձրածայն արտասանում էր իր բանաստեղծությունները, մոտավորած այսպիսի բաներ՝ տաշիկ գումարած խնձոր հանած աղջիկ բաժանած անտառ բազմադասկած զնաց գումարած տոգնավակ հանած տանձ գումարած տուն բազմադասկած լրություն..., և այլն: Զնայած ցուցահանդեսը կոչվում էր «Հեփենինգ», բայց գլխավոր ժետքը դրված էր թատերական խաղի վրա, որի նախակիցներն էին Սալվադոր Դալին և Պիկասոն: Սալվադոր Դալիի դերը խաղում էր լորդ Ֆենիքսի նաև մի դերասան. Վրան ժամացույցներ էին կախել, բեռեր էին կոցրել, ծերը ծերնափայտ էին սկել, իսկ Պիկասոյի դերակատարը դերասան չէր, կարծեմ՝ դահակ էր և իսկաղես շատ նման էր Պիկասոյին: Նա անդադար ծիծաղում էր: Կողը մի աղջիկ կար՝ հազնված ինֆանտեի նման՝ իր Վելասկեզի նկարներից հջած: Ի դեմ, երկու տարի հետո, 1985-ին, Դերասանի տանը մեկ այլ արվեստագետ՝ Հենրիկ Էլիբեկյանը, նոյնուրուն նմանատիմ բենադրություն էր սարել՝ նվիրված ժորժ Յակովլովին (զարդարված դերասանուի իներով, ներկեր ըմբռելով և այլն): Մի խոսքով՝ այդ շրջանում արվեստագետների հիմնական նտահոգությունը դասվում էր արվեստի և արվեստագետի թեմայի շուրջ: Բազմաթիվ էին «նկարչի արվեստանոցում» թեմայով դասեկերները: Նա ինձ այնքան էլ հետարքի չէր թվում: 1983թ. ես որոշեցի նույն տեղում Գեղագիտական դաստիարակության կենտրոնի դահլիճներում, ուր իրականացվել էր «Հեփենինգ» ցուցահանդեսը, ուրիշ մի բան անել: Օրինակ՝ «Ամազոնա» կոչվող դիեսում ես նստած էի խորը մթության մեջ և զրուցում էի մագմիտոֆոնից հնչող կանացի ձայնի հետ՝ իր ամուսիններ եմ, որ ունեմ երեխա, որոնք մեր զրուցի ընթացքում ներկում էին դաշտը՝ մեզ էլ հետք: Կամ՝ «Ելի դեմի բաղադրա» ավելի հայտնի դերֆորմանսը, ուր Կարինե Մացակյանը բուժուց ժորժու նստած էր բեմի եզրին, ավելի հետ ես՝ աշետու սևով փակած, ինչողեւ դոկումենտալ ֆիլմերում կամ ֆոտոներում են փակում աշետը, երբ ցանկանում եմ, որ ճարու դեմքը ճանաչելի չինի: Այդուհետ կանգնած էի ոյուղիսերի առջև՝ կողին մեկ ուրիշը՝ խիրուղի արյունու ժորժու նոյնուրուն ոյուղիսերի առջև: Ավելի հետ դաշնամուրի մոտ նստած Լուսինե




Առաջեցանք կատարում էր Բեթհովենի «Աղասինատը», բայց միայն ձախ ձեռքի դարտիան, իսկ կողին նստած մեկը ջուր էր լցնում մի վերոյից մյուսը: Նրա կողին էլ մեկ ուրիշը լարում էր կիթառը, երբ բոլորը լրում էին: Ավելի եւսում երկուսը, որոնցից մեկը Գագիկ Վարդանյանն էր, հինգ վայրկյանը մեկ ձեռքով բարսում էին իրար, ինչողևս դադահստական հայտնի մի դիեսում: Երբ երաժշտությունը լրում էր, ես ու խիրուրզը գոռալով կարդում էիմ «Սովետական արվեստ» ամսագրից վեցված տեսությունը, որոնց խառնած էին այդ օրվա բաղադրական նորությունները:

1982-ից մինչև 1987 թիվը իմ ընկերները մի ժամի ցուցադրություն կազմակերպեցին՝ հիմնում ունենալով «Կեփենինգ» ցուցահանդեսի կազմը: Սկզբից տաս ակտիվ էր Վարդան Թովմայանը, բայց երբ նա հայտարարեց, որ արստակցիոնիստները նկարել չգիտեն, դրա համար են արստրակա անում, նա և նրա հետ հանձնանված Ուլրեն Արովյանն ու Գագիկ Վարդանյանը դրւու մնացին մեր հետարքությունից: Կետև ավելի նախաձեռնող էին Զիհին ու Էդվարդ Էնֆիաջյանը: Վերջինս երբ դետական օղերայի տեսքը վերանորոգման մեջ էր, այնտեղ մի ժամի հսկայական դասեր էր նկարել դոդ-արս ոճով, ու Զիհին նրա անունը դրել էր Պող Էդու: Նազարեթ Կարոյանը այս ամբողջ ցրանը՝ 80-ից 87 թվերը, անվանում է «Սև բառակուսի»: Ոչ մի ցուցահանդես չի կոչվել «Սև բառակուսի», չկա ոչ մի փաստաթուղթ, ուր հայտարարվի, որ այս արվեստագետները իրենց կոչում են «Սև բառակուսի»: Այս տերմինը հորինվել է «Կազիրյոկ» սրճարանում, Վարդան Թովմայանի կամ Գրիգոր Խաչատրյանի կողմից, իբրև ինքնահեգնանի: Անբողական տարբերակում հնչում էր՝ «Սև բառակուսի միջուկային կենսուն»: Ընդհանրաբես, իրնիան տաս մեծ դեր էր խաղում լճացման տարիների այդ վերջին ցրանում: Շատ զվարճայի էր համարես Էրվարդ Էնֆիաջյանի ամերիկասիրությունը, նա անդադար կրկնում էր, որ ասված Ամերիկայի վերսում է աղորում, և այնտեղ արվեստ անելու կարիք բոլորովին չկա, հարկավոր է ուղղակի տեղափոխվել Ամերիկա (հետագայում նա հենց տեղափոխվեց էլ): Դրա ավելի ծայրահեղ դրսուրումն ուներ Միհայել Պիղոյանը, որը, ինչողևս և Պող Էդուն, մի ժիշ ոռվ էր նվազում, մի ժիշ նկար էր անում, մի ժիշ մոտոցիկլես էր բռում ու գարեջուր էր խմում: Մրա ավելի «լայթ» տարբերակն էր Էրվարդ Մուրադյանը, ում Զիհին անվանում էր Յիմեր Էդու: Նա նույնութեա կիթառ էր նվազում, բայց՝ ֆլամենկո, ու ոչ թե Ամերիկա էր ուզում գնալ, այլ՝ Ճոլանդիա (բայց հետ գնաց Դանիա): Այս մոտեցման լիկվ հակադատկերն էր Արմեն Ճաջյանը, որին Զիհին ոչ մի ձևով անում չէր կարողանում կողմել՝ էլ Ճաջիկ, էլ Խաչիկ, Դավիդ, Կաստա, Ֆրիդրիխ... Եվ միայն երբ Ճաջյան Արմենը տեղափոխվեց Փարիզ ու ամունացավ, նրա համար մնայում կեղծանում գտավ իր կինը: Այժմ նա Արմեն Դու է՝ «դոչաղ» բարից, որը կարծեն բարգմանվում է՝ աջ: Արմեն Ճաջյանն էլ էր փորձում ամեն ինչ՝ դոդ-արս, հիմերենալիզմ, մինհմալիզմ, հումակերություն, միայն կիթառ նվազել չկարողացավ, ինչողևս Սեբ Սեմերջյանը, որն այրտես էլ Օֆենբախի նման նկարել չկարողացավ: Ֆլորֆը հիմի էր, ասում էր՝ իբր հարվածային գործիքներ է նվազել «Առայալներ» խնքի հետ: Նկարում էր դրիմիսիվ հետիաբային նկարներ՝ «Բրեմենյան երաժիշտներ» մուլտիկի նման: Նա տեղափոխվեց Մերձալիքան երկներ: Գրիգոր Խաչատրյանը Արմեն Ճաջյանի հետ հումակերություն էր անում, խոսում էր արստակցիոնիզմի մասին և իր «ստոլբիզմները» փորձում էր ներկայացնել իբրև արստակցիոնիզմի վերջին նվազումը: Զիհին նրան Պարոն և. էր ասում՝ իր խըսիքը ծիծաղի դաշտառով, բայց երբ նա աս աղավնի են» հակամերիկյան ոլակացի համար դետական մրցանակի արժանացավ, Զիհին նրան սկսեց Ընկեր և. ասել: Պարզվեց, որ Գրիգոր Խաչատրյանը դեռ ուսանող տարիներին եղել է հսկական սոց-արս ոճի կողմելուալիս, բայց դա մենք հայտնաբերեցինք 1990 թվին, երբ նա սարեց իր հայտնի «Մանիֆեստ»: Այս խնքի ամենաամբողջական ու տղավորիչ կերպարը Հենրիկ Խաչատրյանն էր՝ Սև Ճեմդոն: Նա 70-ականների հիմներից է՝ տարված գրականությամբ: Սակայն Զիհին ու ես վերջնականապես հիասթափեցինք նրան գրականությունից՝ բնադատելով իր անավարտ վերը, որից հետ նա որուեց ամեն ինչ վառել ու իբրև աշխատանքային գործիք ընտեց ֆարսումկան: Սև այդ թվերին հսկական անարխիս էր:

1985 թ. Միհայիլ Գորբաչովը հրչակեց Գլասնուսը և Պերեսրոյկան:

1986-ին կազմակերպեց Երիտասարդական համամիութենական մի ցուցահանդես, որին զուգահեռ տղագրվեց Երիտասարդ արվեստագետների հանրահայք մի ալբոն: Ես ու Զիհին որուեցինք համոզել մեր ընկերներին միասին գործեր տանել այդ ցուցահանդեսին, թե-

2008



կուզն հույս չունեինք, որ կը նդունեն: Մինչ այդ էլ դատահում էր, որ ներկայացնում էինք մեր աշխատանքները, ասենք, ժամանակակից արվեստի թանգարանում, Ժուռնալիստների տանը, Կինոյի տանը կազմակերպված ցուցահանդեսներին և հիմնականում մերժում էինք ստանում: Այս անգամ էլ տարանք, և բոլորիս աշխատանքները մերժեցին: Նույն թվականի աշնանը այդ ցուցահանդեսի բնարկումն էր: Սովետական Սիությունում բոլոր ցուցահանդեսների վեջում տեղի էին ունենում բնարկումներ, որոնց ժամանակ հիմնականում հնչում էին գովասաններ և կենացի մակարդակի խոսքեր ցուցահանդեսի մասնակիցների հասցեին: Բայց այս անգամ Երիտասարդական ցուցահանդեսի բնարկումը նման չէր նախորդներին: Նախ՝ Նազարեթ Կարոյանը սկանդալային ելույթ ունեցավ. նրանից սղասում էին ցուցահանդեսում ներկայացված աշխատանքների վերլուծությունը, իսկ նա շատ ակադեմիական լրջությամբ սկսեց մեկ առ մեկ թվարկել Երևանի ժամանակակից արվեստի թանգարանի կտորին հավաքված աղբը, որ նեսվել էր կողին բարձրահարկ տեսնի բնակարանների դատուհաններից: Դեռ Նկարիչների միության նախագահ Սարգիս Մուրադյանը և Երիտասարդների գծով վարչության բարույա Զորիկ Միրզոյանը սկսեցին դժգոհել ու բնադրատել ներկայացված աշխատանքները՝ ասելով, թե բոլորովին չի երևում, որ սրան Երիտասարդ արվեստագենների գործեր են, չէ՞ որ իհնա դերեստրոյկա է, խոսի ազատություն, իսկ ցուցադրված գործերում ոչ մի թարմություն չկա: Քիին, որ նսած էր իմ կողին, սկսեց ինձ համոզել, որ ելույթ ունենամ՝ ասելով՝ ինչ՝ ենք մենք սրճարաններում խոսում, իսկ այստիսի դեմքերում՝ լրում: Սովետական Սիությունում բոլոր մեծ ցուցահանդեսները կազմակերպելու համար ձևավորում էին հանձնաժողովներ: Ես իմ ելույթը սկսեց՝ ցուցահանդեսի կազմակերպման այդ ձևը բնադրատելով: Ասացի՝ զարմացած եմ, որ դրի չեմ հավանել ձեր կազմակերպած և ձեր իսկ ընտրած գործերով ցուցահանդեսը, ու որ ես համաձայն եմ, որ ցուցահանդեսը վասն է, բայց դրա մեղավորը դրի եթ: Գեղարվեստի ֆոնդի սնօրեն Ալբերտ Բաղդասարյանը և արվեստաբան Վահան Ղարությունյանը հանկարծ տեղից վեր կացան ու ասացին, որ իրենք իմ աշխատանքին կողմ են բվեարկել: Ես ամբիոնից հարցրի՝ դրի կոմիսիայում կայի՞՛, դատախիսանեցին՝ այս: Ես ավելացրի՝ այ դրի դեմք է չինեիք, նրանի տարակուսած նստեցին: Իրենց թվացել էր, որ ես դժգոհ եմ, որովհետև իմ աշխատանքը մերժել են: Զեմ ժխտում, որ դա նույնութեա կարող էր դեռ խաղալ իմ ելույթի համար, բայց ես ավելի կարևորում էի ցուցահանդես կազմակերպելու մեխանիզմի փոփոխությունը: Ցուցահանդեսի կազմակերպիչը դեմք է լիներ մեկը, ով դատախիսանատվություն է վեցնում իր ընտրության համար, կարող է բացատել, թե ինչու է այս աշխատանքը կարևոր այս ցուցահանդեսում: Սարգիս Մուրադյանը և Զորիկ Միրզոյանը, որ իրար կողմ նսած էին բեմում տեղադրված սեղանի շուրջ, իրար հետ բանակցելուց հետո հայտարարեցին, որ համաձայն են ու կարող են ցուցարան տրամադրել, որմեսզի ես ցուցադրեմ այն գործերը, որոնք համարում են արժեավոր, իսկ իրենք դրան չեն ցուցադրում: 1987-ի սկզբին, երբ կազմված է Նկարիչների միության այդ տարվա ցուցահանդեսների ցուցակը, դարձվեց, որ մեզ ոչ թե ցուցարան, այլ կոնֆերանսի դահլիճն է տրամադրվում: Ես Նազարեթ Կարոյանի և մյուսների հետ խորհրդակցելուց հետո որոշեցի, որ կանեմ ոչ թե նկարչական ցուցադրություն, այլ կիրավիրեն նաև այլ արվեստների ներկայացուցիչների, որոնք այս կամ այն ձևով մերժված կամ արհամարհված են իրենց գործում: Պոեզիա, երաժշտություն, կինո, դերֆորմանս, մի խոսնով, մեկ շաբաթ ամեն օրը նվիրված կլինի արվեստի մի տեսակի: Որուել էի նաև տարիվային սահմանափակումից հրաժարվել, թեղետ ափիցի վրա դեմք է գրված լիներ «Երիտասարդական ցուցահանդես»: Դրավիրվում էին բոլոր նրանք, ովքեր կողմ էին, որ իհն համակարգը փոխվի, որ Նկարիչների միությունն ու Նկարչի տունը դեմքական բյուրոկրատական աղարատի գեղագիտական դրույթագանիստից վերածվեն ազատ արվեստագենների միության և ազատ ստեղծագործության տան: Որդեսզի փոխվի բաժանումն ըստ սեկցիաների սկզբունքը՝ բանդակագործ, գեղանկարիչ, գրաֆիկ, կերամիկ, արվեստաբան և այլն, և ստեղծվեն փոփրիկ խմբավորումներ կամ գաղափարական միավորումներ: Բացվեն արխիվները, լինի մի գրադարան, ուր ոչ թե Ռեմբրանտի ու Շեմինի ալբոմները դրված կլինեն, այլ՝ ինֆորմացիա դարասկզբի հայկական մոդեռնիզմի ու հետագա ազամյան դիմիդենտական շահման մասին:

Առաջին «3-րդ հարկը» բացվեց 1987-ի ապրիլի 10-ին, և սեղ մեկ շաբաթ՝ մինչև ապրիլի 16-ը: Այդ ժամանակ Նկարիչների միությունում ափիսները ձեռնով էին գրում: «3-րդ հարկի» ափիսը ես նկարեցի՝ իրև էսիզ օգտագործելով իմ աշխատանքներից մեկը, որը կոչվում է



«Միզող դանկերը տուալետում»: Այդ նկարի դերսունաժները նման էին իմ դղրոցական ընկերներին, որոնք, այսպես ասած, «խուժաններ» էին, բայց լսում էին Զանիս Զովիլին, Դիփ Փարփլ, Զիմի Շենդրին: Առաջին անգամ այս երաժշտությունը եղանակով նույնականացվել է մասնակի համար՝ առաջին անգամ այս երաժշտությունը կատարելու պահին: Այս լուսունը, «3-րդ հարկի» աֆիշին երկու դանկեր էին, անարխիայի նօւնն էր և տեղեկություն, թե ո՞ր օրը ինչ համեմտում է լինելու: Բացումը եղավ իմ ելույթով, որի տեսքը չի դադարանվել, իետք հանդես եկան բեյֆ-դանս դարողները, և վերջում Աւոն-Աւոնի դերֆորմանսն էր, որի ամունը Զիմին որել էր «Ցամաք ձորի աղվեսը», կամ միզուցե դերֆորմանսը իսկապես այրուես էր կոչվում: Աւոն-Աւոնը, դեռ մինչև «3-րդ հարկը», ստղծել էր արվեստագետների մի խումբ՝ «Ենդոռեալիզմ» ամունով, որի մեջ էին Վահան Ռումելյանը, Գիծ Կարոն, Գեղամ Խաչերյանը, Գյոզը և էլի մի բանի հոգի: Նրանք բոլորը մի տեսակ կրոնամուներ էին և բացարձակապես չին հավանում «Սև բառակուսի» խմբի արվեստը: Զնայած իրենց «հոգևոր կեցվածին»՝ նրանք մինչև «3-րդ հարկը» ոչ մի ցուցահանդես չին կազմակերպել և ոչ մի ցուցահանդեսի էլ չին մասնակցել: Հաջորդ օրերին ներկայացվեց մինհմալիստական երաժշտություն, որի մոդերատուրն էր Տիգրան Թահմիզյանը, ով, իմ կարծիքով, ամենաառաջադիմ հայ կոնժողիսորներից մեկն է, ես ուստի բարձ եմ գմահատում հատկապես նրա վերջին «Աղմուկներ» շարքը: Քետք կար զազ երաժշտության երեկո, ի դեմ, այդ օրը ելույթ ունեցավ Շուշան Պետրոսյանը: Երևի դա նրա առաջին հրադարակային ելույթներից մեկն էր: Պետք է համերգ տա R-18 դամնկոռտ խումբը, բայց դեմքան հեռուստաեսության հետ հաճախանության չգալու դատարանով R-18-ի երաժշտությունը զազ երեկոյի վերջում հարբած զարդեցին հարվածային գործիքներն ու բարձրախոսները: Հաջորդ օրը փոխարինվեց հեռինակային երգի երեկոյով: Պահլամպել է այդ օրվա հեռուստահաղորդումը: Պուեներից առաջին անգամ «3-րդ հարկում» ներկայացել է Արմեն Ֆօն Գևորգյանը, որը հետագայում Ալ Շենդրոյի հետ խմբագրում էր «Այսօր» սամիզդաս ամսագիրը, իսկ հետո մենակ՝ «Այսօր» և «Ֆոնֆոն» ժամանցային թերթերը:

«3-րդ հարկ» ցուցահանդեսի մասնակիցների թիվը անցնում էր 57-ից: Կար մի բանդակագործ, որը մի ժիշ սովորել էր Երևանի ինսիտուտում, հետև՝ Լիսվայում (Վիլյուսում), նոր ավարտել էր ինսիտուտը ու եկել Երևան ու մասնակցում էր «3-րդ հարկին», նրա անունը Շավարշ Խաչատրյան էր: Շավարշը այնտեղ էր ոգլուրվել «3-րդ հարկից», որ 1987-ի ամռանը կազմակերպեց մի ցուցահանդես Լիսվայի Պանհիվեժիս փոթրիկ բաղադրում: Ցուցահանդեսին հրավիրված էին իր նախկին կուրսեցիները, Զիմին, ես ու էլի մի բանի հոգի: Մերձբալթյան երկրներ այդ ժամանակ արդեն բավական առաջադիմ էին, բացի էին ժամանակակից արվեստի բանգարաններ, մասնավոր կոլեկցիաներ: Ազատություն ցուցադրվում էին արստական, հիմերուեալիստական, դոդ-արտ ոճով արված անհաճ-անհետարքիր գործեր: Ես ու Զիմին ցըում էիմ այդ կոլետուական, բուժուական հանգիս ցուցասրահներով ու ջղայնանում: Մեր ուղածը ուրիշ բան էր: Եվ իենց Պանհիվեժիսի լուր ու խաղաղ հյուրանոցում մենք որոշեցինք «ջղայն» արվեստագետների մի խումբ ստղծել: Մանիքես գրեցինք, որը կոչեցինք «Մեռած արվեստի մանիքես», մի տողը ես էի գրում, մի տող՝ Զիմին:

Մեռած արվեստի մանիքես

օբյեկտիվ արվեստ

գոյուրյուն չունեցող արվեստ

հոգնած արվեստ

ծիծաղելի արվեստ

աղբաս

բւշվառ

խեղճ

վերջացած


ունահարված

անդես

կերած-խմած

հնարամիս

2008



մերկ

ուազմատենչ արվեստ

ձեռից գնացած արվեստ

գերեզմանային արվեստ

սառը

հարմարեցված

նոնկոնֆորմիտական արվեստ

վատ արվեստ

մարդաստան արվեստ

մեռած արվեստ

Դաջորդ օրը մանիֆեստը ցուց սվեցին մեր ընկերներին՝ Դերիխնազ Գալստյանին, Արմեն Գևորգյանին, Արմեն Պետրոսյանին, Արա Հովսեփյանին, Արշակ Նազարյանին, Շավարշ Խաչատրյանին: Բոլորը շատ ոգևորվեցին: Այն, որ խումբը կոչվի «3-րդ հարկ», առաջարկեց Զի՞ն, և բոլորը հաճածայնվեցին:


Երբ մենք վերադարձամ Երևան, Նկարիչների միությունում համագումարային տրամադրություններ էին: Երիտասարդական միավորնան նոր կազմի ընտրությունների ժամանակ ինձ ու Նազարեթ Կարոյանին ընտեղին միավորնան դեկավար կազմի մեջ: Պետք է նշել, որ Նկարիչների միության երիտասարդական միավորնան անդամ դաշնալը դեռ չէր նշանակում լինել Նկարիչների միության լիիրավ անդամ, և, փաստուեն, «3-րդ հարկի» 1988-ի կազմի արվեստագեններից ոչ մեկն այդուն էլ Նկարիչների միության անդամ չդարձավ: Մենք անմիջապես հանդես եկամ առաջարկություններով, որ Երիտասարդական միավորումն անկախանա Սովետական Միության Նկարիչների միությունից, որ անդամների կազմի հաստատումը այլև չկատարվի Մոսկվայում, այլ մենք ինքնուր հաստատեմ մեր միավորնան անդամությունը: Որոշում ընդունեցին հրաժարվել ցուցահանդեսները ժողուրիվ կազմակերպելու դրակիտիկայից: Այսուհետ Երիտասարդական միավորնան անդամ կարող էին դառնալ՝ չունենալով դրոֆեսիոնալ կրթություն, հանրադեմական և համամիութենական ցուցահանդեսների մասնակցություն և այլն: Դեռ, երբ Նկարիչների միության համագումարն էր, ինձ առաջարկվեց ելույթ ունենալ: Երբ ես ներկայացնում էի մեր մուտքումները, համագումարի մասնակիցները սկսեցին աղմկել և թույլ չտալ, որ խոսի ավարտեմ: Դատկադեմ նրանց շատ էր զայրացել իմ այն արտահայտությունը, որ «արվեստ ոյիշի տևի կարճ, ինչքան հնարավոր է՝ կարճ, կայծակի օնան կարճ: Մեզ հոգմեցրել են նավի ճարագ հիշեցնող արվեստի գործերը»: Իմ ելույթը, մասնաք խմբագրված, տղագրվեց «Սովետական արվեստ» ամսագրում, իսկ հետո՝ դակաս խմբագրված ձևով՝ «Գարուն» ամսագրում: Դամագումարն ընտեղ Նկարիչների միության նոր նախագահ՝ Արա Շիրազին: Երիտասարդների գծով բարուդար դարձավ Երվարդ Խարազյանը, որը շատ էր մեզ հաճակրում և միշտ դաշտանում էր ու աջակցում: Արաջին ցուցահանդեսը, ուր «3-րդ հարկ» ներկայացավ իրու խումբ, 1988-ի գարնանը Լենինականում Նկարիչների միության մասնաճուղի ժենում բացված ցուցահանդեսն էր: Ցուցադրությունը վերնագրված էր հետո «3-րդ հարկ»: Ամեն ինչ շատ լավ էր կազմակերպված, մասնակիցներին հրավիրել էին Լենինական, աղահովել հյուրանոցով, աշխատանքային դայնաններով: Սև Հենդրն հենց ժեղում իր «կրակնետիչով» մի բանի գործ արեց: Արդեն սկսվել էր Ղարաբաղյան շարժումը, մենք ներկա գտնվեցին այդոյիսի մի միտինգի, ես իմ շորերի վրա մի բանի տասնյակ սովետական մեղալներ ու նշաններ էի կողցրել: Միտինգի մասնակից մարդիկ, տեսնելով ինձ, իրենին մեղալներն էին կողցնում ինձ վրա ու միաժամանակ անհանգստանում մեզ համար: Մի խոսնով, «3-րդ հարկ» առաջին ցուցահանդեսը Լենինականում շատ տղագրվեց: Ցուցահանդեսից հետո, երբ վերադարձամ էիմ Երևան, ավտորուսի մեջ որոշեցին մի նոր մանիֆեստ գրեն ինքնուր մեր ստեղծագործության մասին, որը հետո ինք կմիացնի իրար: Ամենատղավորիչ տողերն Աւոս-Աւոսինն էին՝ «մարմալադե սարեր», «ծովը շաբար լցնել», մեկ էլ՝ Վահան Ռումեյյանի տողեր՝ «ինչքան վատ՝ էնքան լավ»: Նազարեթ Կարոյանն այդուն էլ չկարողացավ այդ մեջերը կողմնել իրար, և դա արեցի ես: Դեռ «Մշակույթ» ամսագրում տղագրվեց դրա աղավաղված տարբերակը:

Մեզ համար կարևոր էր, որ «3-րդ հարկը» իրու խումբ հանդես գա նաև Երևանում: Որո-



Եցին խճակային ղերժորմանս անել ղաւոնական ցուցահանդեսներից մեկում: Դա երևի Սովետական Միության վերջին համամիութենական ցուցահանդեսի առիթով բացված հանրապետական ցուցահանդեսն էր: Մենք որոշեցինք, որ կմանենք ցուցասրահ՝ իրևս սովետական ռեժիմի զոհեր, որոնց կյանքը սոցիեալիզմը հրաժարվում էր ղատկերել: Իմ Վզից մի տախտական կամ կախված, վլան գրված էր՝ «Ողջուն Նկարչների միությանը անդրշիրինյան աշխարհից»: Զիմին խաղում էր ձեռավագչինային զոհ գնացած գինվորի դեր, Աւուս-Աւուսը՝ փողոցում ավտոյի տակ ընկած աղքատ անցորդի, Կարդանն իր ղանկը ընկերներով խաղում էին ոռ սիրելու, երկար մազեր ղահելու համար ծեծված, խուսանգված ղատանիների դերեր, Կարինե Սացակյանն ու Ստեփան Փանոսյանը՝ բոլուսիզմին զոհ գնացած ազնվականների դեր, իսկ Բորիս Շերկայացնում էր կոլեկտիվացման տարիներին զոհ գնացած կուլակի դեր և այլն: Պերֆորմանսը լավ ընդունելություն գտավ: Լրագրողները երբ թերթերում գրեցին դրա մասին, վերանցանեցին այն՝ դարձնելով «Պատոնական արվեստ մահացել է»: Ամենաազդեցիկն այն էր, որ երբ նույն 1988-ի դեկտեմբերին տեղի ունեցավ Սովորակի երկրաշարժը, շատերին հետին հաշվով թվաց, որ մենք կանխատեսել էինք այն: Բայց իրականում մենք ընդամենը բննադատում էինք սոցիալիզմը, որը Սովետական Միությունում խաղում էր գեղագիտական ոսիկանության դեր: Դաշորդ տարի, երկրաշարժից հետո, երբ ձեռբակալված էր «Ղարաբաղ կոմիտեն», երբ սովետական զորերը ճեկ էին Երևան, շրջափակել էին օդերայի կամ Ազատության հրադարակը, Սկարչի տանը մենք բացեցինք մի ցուցահանդես»՝ «3-րդ Զարկ 666» ամղագործում անունով: Այն Նկարչի տան առաջին հարկի դահլիճում էր: Ակսում էր նախարարից, ուր, ինչողեւ բոլոր խորհրդային ինստիտույտներում, տեղադրված էր Լենինի արձանը: Արմեն Պետրոսյանը, օգտագործելով Լենինի արձանը, մի հսկայական ինստալացիա էր սարել՝ փայտն մեծ տուփերով, մեծ բանակությամբ թեփով ու տաշեղներով և փշալարերից սարված իր իսկական չափսերի Միլոսյան Վեներայի արձանով, որն ամբողջությամբ ողողված էր կարմիր լուսով: Մենք ցործ էինք Նկարչների միության ստենդները, և դահլիճը դարձել էր սև գոյնի: Նազարեթ Կարոյանի դահանջով բաց էինք թողել ղատի մի հսկայական մաս, որի միջից Երևան էր Նկարչի տան դահեստը՝ իրար վրա լցված նկարներով ու բանդակներով, որոնք տարիների ընթացքում կուտակվել էին այստեղ: Աւուս-Աւուսը, հազար լատերայի տոմսերից, կարերից բաղկացած կոլաժի կտորով կարված իր 10 մետրանոց զգեստը, ղերժորմանս էր անում: Մազերը դարանով գետնին գամկած կոնցն ազատագետնուց հետո, նա այսուրով սրբագրծեց միության դահլիճը: Այս ցուցահանդեսի գործերի մեծ մասը նույն տարվա աշնանը ցուցադրվեց Փարիզի Սալ-Պետրին ցուցասրահում՝ «Դայկական ավանդարդ»՝ «3-րդ հարկը» Փարիզում» վերնագրով: Որվան էլ որ Նազարեթ Կարոյանն ընդդիմանում էր և փորձում բոլորին բացատրել, թե «ավանդարդ» տեմինը հնարավոր չէ կիրառել «3-րդ հարկի» արվեստագետների նկատմամբ, բայց, միևնույն է, այդ տեմինը հաճախ էին օգտագործում մեզ բնորություն համար: Իսկ Փարիզի ցուցահանդեսը կազմակերպող Կարոյանը Թերզյանն այնքան ակիշիվ էր ու ցայտնուի մեջ, որ ընդհանրապես մոռացավ Նազարեթ Կարոյանին ու կատալոգի առաջարանի տեսությունը հանձնարարեց գրել մեզ բոլորին անհայտ մի արվեստաբանի: Ցուցադրությունից դրուս մնացին նաև Շավարշ Խաչատրյանը, Կարինե Սացակյանը, Արշակ Նազարյանը, հիմերուեալիս Վարդանը և էլի մի բանի հոգի: Փարիզի «Լե Սան» գալերեայի սնօրեն Լիլիան Տարոնյանը, որ Կարոյանը հետ միասին Փարիզի ցուցահանդեսի կազմակերպիչներից մեկն էր, ցանկացավ, որ գալերիան կոչվի «Լե Սան», որովհետև «3-րդ հարկն» իրեն հիշեցրել էր 60-ականների վերջի, 70-ականների երիտասարդական շարժման ժամանակ իրենց ընկերական խճականարարությունը, որը կոչվել էր «Լե Սան»: Նա «Լե Սանը» բացատրում էր իրեն՝ հարյուրներ, բազմություն կամ ոչինչ: Ֆրանսիայի հետո առաջացավ մի իրավիճակ, երբ «3-րդ հարկը», որդեսզի դահլիճը իր ամբողջականությունը, դեմք է կազմված լիներ 3 տարբեր ոճական միավորումներից: Դրա կողմնակիցն էր հաւկանես Աւուս-Աւուսը, ով ձգտում էր կոնցեմտուալիսների թև ստեղծել «3-րդ հարկ» մեջ՝ իմձ ու Զիմին թողնելով համադատասխանարար դոդ-արտը և աբրակցիոնիզմը: Բայց մի փոքր եւ վերադառնամ 1988 թիվը, որդեսզի ցուց տամ, թե «3-րդ հարկը» երբեք չի եղել տաս ամբողջական կամ ֆիսված անդամներ ունեցող խումբ: 1988-ի ամռանը, Լենինականի ցուցահանդեսից հետո և «Ողջուն»՝ ղերժորմանսից առաջ, մեզ՝ «3-րդ հարկին» հրավիրել էին մասնակցելու Նարվայում կազմակերպված «Սովետական Միության ավանդարդիս արվեստագետների առաջին հավաքին»: Դավադին մեկնելու համար

2008



արվեստագետներին ընտել էին Զիհին և Հաջան Արմենը, դարձյալ չկար Նազարեթ Կարոյանը, և արվեստաբանի դեռը վերաբահված էր Էրվարդ Ենֆիաջյանին: Մասնակցում էին նաև Շավարշ Խաչատրյանը, Սև Շենդըն ու եւ: Դա, իհարկե, դուր չէր եկել Աւոս-Աւոսին, ով Վահան Ռումելյանի և Կարո Մկրտչյանի հետ նույն ժամանակ գտնվում էր Սերքալբյան մեկ ուրիշ ժաղարկում՝ ճամանակցելով դեֆորմանս-արքի ֆեսիվալի: Պարզ է, որ գոյն չէին նաև Արա Շովստիվյանը, Արմեն Գևորգյանը, Արմեն Պետրոսյանը, Արշակ Նազարյանը և մյուսները: Այնուն էր սասցում, որ ամեն անգամ, երբ «3-րդ հարկը» միասնական ցուցադրություն կամ հայտարարություն դեմք է աներ, մեմն սիդոված էին լինում նորից բանակցություններ վարել և որուել մեր անդամների կազմը: Եվ ամեն անգամ գրվում էին նոր մանիֆեստներ: Եվ, ուրեմն, Փարիզից Վերադառնալիս ես ու Աւոս-Աւոսը ծրագրեցին կազմակերպել մի ցուցադրություն, ուր կներկայացվեն «3-րդ հարկի» մեջ առկա 3 տեղենցները՝ մինիմալիզմ, դոոդ-արք, կոնցեպտուալիզմ: Սակայն Նկարիչների միությունն ուներ միայն երկու դահլիճ: Աւոս-Աւոսը չհամաձայնվեց կոնցեպտուալիզմը ցուցադրել նախարարություն և գրասենյակներում: Արհամարհանով ասաց, որ դոոդ-արքն ավելի է սազում տուալետում ցուցադրելու համար: Դեռ ես ու Զիհին փորձեցին համոզել, որ կոնցեպտուալ մասն անի ժամանակակից արվեստի թանգարանում, բայց դա ել չհաջողվեց: Որքան իիւում եմ, դաշտառը Աւոս-Աւոսի նախընտրած երիտասարդ արվեստագետների անկազմակերպ ու ամուստաս լինելն էր: 1990 թ. բացվեց «3-րդ հարկ +» ցուցահանդեսը Նկարիչների միության երկու դահլիճներում: Որդեսզի ոճական տարբերությունները ցեսվեին, մեմն Նկարիչների միության ենաբարակի աղբանոցում ֆոտոդեֆորմանս արեցին: Պոոդ-արքիսները վիճում էին Զիհին և Արմեն Հաջանի հետ: Ցուցահանդեսում ներկայացված էր նաև վիթեն-որկումենտացիա՝ «3-րդ հարկի» նախկին ցուցադրություններից: Հատուկ «+» բաժնի համար գրված էր մանիֆեստ, էլի ուրիշ տեսուեր, սարված էին դրուեներ, որով «+»-ները դեմք է տարբերվեին «-»-ներից: Օրինակ՝ Արա Շովստիվյանի դրույ իրենից ներկայացնում էր տարիներ շարունակ ոնի տակ օգված մի «դոլի սոր»՝ ի հակարություն «-»-ների, որոնք ցուցահանդեսի բացման համար հանդերձանք էին ընտել սղիսակ վերնաշաղիկը, կոսյումը և սև «բարօչկաները»: Վասն այն էր, որ Զիհին երբ միայնակ ինչ-որ բան էր կազմակերպում, շատ արագ իհասթափվում էր: Ու չնայած նրան, որ «-» բաժնին իմ խորին համոզմանք շատ լավ էր սասցել, բայց, միևնույն է, Զիհին ընկավ դեմուսիայի մեջ ու իհասթափվեց ինչպես մինիմալիզմից հերև արվեստի ոճի, այնուև էլ՝ նրանցից, ում ցուցադրել էր: Չնայած մանիֆեստի հեղինակը ես էի, «+»-ը ավելի միասնական, կոլեկտիվ աշխատանք էր, բոլոր մասնակիցներն էլ շատ ոգլուրված էին ու նախաձեռնող, համարենք՝ Սահակ Պողոսյանն ու առաջին անգամ «3-րդ հարկում» ցուցադրվող Սարգիս Համալբայյանը և Ռուբեն Գրիգորյանը: Վերջիններս, Արարատ Սարգսյանի հետ միասին, նախուան այդ մի միասնական ցուցադրություն էին կազմակերպել Գերմանիայում, ունեին Հայաստանի արվեստի զարգացման իրենց ուրուս տեսակետը: Չնայած Արարատ Սարգսյանը «3-րդ հարկ +»-ին չնամանացեց, բայց հետազոտ ինքն էլ շատ ակտիվ մասնակցություն և ներդրում ունեցավ ինչպես «3-րդ հարկի», այնուև էլ՝ այլընտանիային արվեստի գրեթե բոլոր նախաձեռնություններում: «-» բաժնում առաջին անգամ մեզ հետ ներկայացել էին 70-ականների՝ արդեն անվանի նոնկոնֆորմիս Շա?ֆի Արայիանը՝ իր սիանչելի սղիսակ գործերով, և Օֆենբախը, որը հետագայում նախաձեռնեց «Բունկեր» գալերեան:

Հաջորդ տարի՝ 1991-ին, Սահակ Պողոսյանը կազմակերպեց «Օբյեկտ» անունով ցուցահանդես՝ երևի ցանկանալով հաշտեցնել կոնցեպտուալիստներին «3-րդ հարկի» հետ, սակայն փաստը, որ «3-րդ հարկ» անունը չէր օգտագործված ցուցահանդեսի վերնագի մեջ, խոսում էր այն մասին, որ կոնցեպտուալիստներ արդեն սկսել էին իրենց հակառակ «3-րդ հարկին»: Նույն 1991-ին Նազարեթ Կարոյանը, Կարո Թերյանը և Արմեն Մազմանյանը նախաձեռնեցին «Գոյակ» դասկերարակը՝ հայտարարելով, որ «3-րդ հարկն» իր միսիան կատարել է, և ժամանակն է դուրս գալ Նկարիչների միությունից, իիմնել արդեն անկախացած Հայաստանում ուր արվեստի իմստիտուցիաներ: Պետք է ընդգծել, որ «3-րդ հարկ +» ցուցահանդեսը տեղի է ունեցել 1990 թ. գարնանը: 90-ի ամռանը Լսոն Տեր Պետրոսյանը ընտրվեց դառնամենի նախագահ, հաջորդ տարի Սովետական Միությունը փլուզվեց, և Հայաստանի Համբայետությունը հոչակվեց անկախ դեսություն: Անցում արվեց դետական ոլանային սնտեսությունից դեմի ազատ ժողովական հարաբերություններ: Եվ ուրեմն, «3-րդ հարկը» նոր սնտեսա-



կան, բաղադրական իրավիճակում այլևս անելիք չուներ: Բայց ես ու Զիթին չէին ժամում հրաժետ տալ «3-րդ հարկին» և հաջորդ տարի նորից որուեցին կազմակերպել հերթական ցուցահանդես: 1992-ի գարնանը ձնիալի դաշտառով Նկարչի տան ցուցասահները ուստի էն էն դանդվել: Ես ու Զիթին մտածեցին օգտագործել բնական տարերի հետեւ՝ ներկայացնելով մի իրավիճակ, թե ինչոր է «քարձ մոդեռնիզմի» էլիտար ցուցահանդեսը, որը բնականաբար արսերակցիոնիստական դեմք է լիներ, բարումանդ է եղել բնական տարերին նմանվող հեղափոխությունից դատեր բանդվել են, իներեւը վերածվել է էֆուսերի, և հեղափոխականները դատերին գրաֆիկներ են արել: Այդ ցուցահանդեսը կոչվեց «3-րդ հարկ N5 գրաֆիկ»: Այդ նույն ժամանակ Արարած Սարգսյանի, Սարգսի Յամալբայյանի և Ռուբեն Գրիգորյանի ալիշվությամբ Լեհաստանում կազմակերպված էր մի ցուցադրություն, որին մասնակցում էր նաև Արա Յովսեփյանը: «3-րդ հարկ N5 գրաֆիկ»-ում Արա Յովսեփյանին և Ռուբեն Գրիգորյանին փոխարինեցին իրենց կանայք Արարու Ներկարարյանը և Արևիկ Արևածայանը, որոնք իրենց առաջին հայացիցից իրար չհավաքնեցին: Եթե Արևիկ Արևածայանը 1987-ից՝ Նկարչիների միության երիտասարդական միավորնան դեկավար կազմում ընտրվելուց հետո, բոլորի համոզնամբ մարմնավորում էր «Պատմությունը արվեստի մեջ», աղա, դրան հակառակ, Արարու Ներկարարյանը սկսեց ինքն իրեն մատուցել իրու ծայրահեղ «հակառակության», ձգում էր, ինչոր արվեստի գործերում, այնուև էլ առօրյա կյանում դիմել դրովոկացիաների, հայտնվել սկանդալների մեջ: Նա համարեց տաս էր սիրում մրցակցել ու հաղթել կին արվեստագետներին, և այդ իմաստով տաս լավ առիթ ընձեռնվեց նրան նոյն թվականի աշնանը «9-ի ցուցահանդես»-ում: Արարու Ներկարարյանը վերջապես կարողացավ հաղթանակ տոնել դեռ 1989-ից իրեն հանգիս չսվոր այնողիս մրցակցի նկատմամբ, ինչորին էր Կարինե Մացալյանը, առավելաս, նա իր գերազանցությունը սկսեց զգալ այնողիս արվեստագետների նկատմամբ, ինչոր Արևիկ Արևածայանը և Յերինազ Գալստյանը, որոնք, իր կարծիքով, անհուսալիորեն «ես էին մնացել»: Մնում էր միայն գերազանցել Սոնյա Բալասանյանին: Յետագա տարիներին Արարու Ներկարարյանն իր ողջ ներուժը ներդրեց «3-րդ հարկից» դուրս կոնցեմտուայիստական արվեստի ցըանակներում իր ազդեցությունն ամրապնելու վրա: Յարկավոր է ներեւ, որ 1991-ից հետո տաս էին ակտիվացել մասնավոր կոմերցիոն գալերեաները և ոչ միայն դրան: Օրինակ, Յենրիկ Իգիրյանի սնօրինության տակ գտնվող Գեղագիտական դաստիարակության կենտրոնի մի խումբ ուսուցիչ-արվեստագետներ այցելել էին ԱՄՄ, այնտեղ ծանրացել ծագումով իրանահայ նյույորքի արվեստագետ Սոնյա Բալասանյանին և նրա հետ միասին մտահղացել էին Երևանում հիմնել ժամանակակից արվեստի կենտրոն: Ամենայն հավանականությամբ, նրանի լավ չէին կարողացել դայնանավորվել կամ հասկանալ միմյանց, որովհետև այն, ինչ նախատեսում էր ստեղծել Սոնյա Բալասանյանը, ամբողջությամբ չէ, որ համընկնում էր Գեղագիտական դաստիարակության կենտրոնի ուսուցիչների մտահղացմանը: Ինչն է հետաքրի: Ժամանակակից արվեստի թանգարանը, որի սնօրենը բացման օրվանից (1972թ.) մինչև այսօր նոյնութեա հգիրյան է, միևնույն ժամանակ Երևանում և Բեյրութում նախաձեռնել էր «Նոյան տաղան» անունով կոմերցիոն արվեստի գալերեա: Երևանում այն վերածվեց «Նոյան տաղան» գրախանութի, իսկ Բեյրութում՝ «Նոյան տաղան» գալերեայի, որի միակ սեփականատերն այսօր Սովուս Ծիրանին է: Եվ, ուրեմն, Սոնյա Բալասանյանը 1992-ին տաս մեծ խանդակառությամբ եկավ Երևան ու ձեռնամուկս եղավ իր նախագծի իրագործանը: Ժամանակակից արվեստի թանգարանի տարածում նա կազմակերպեց մի ցուցահանդես, որը կոչվել է «9-ի ցուցահանդես»: Մասնակցում էին Սոնյա Բալասանյանը, 4 արվեստագետ Գեղագիտական դաստիարակության կենտրոնից՝ Սամվել Բաղդասարյանը, Սամվել Բաղդասարյանը, Կարեն Անդրեասյանը, Ստեփան Վերանյանը, և 4 արվեստագետ «3-րդ հարկից»՝ Աւոս-Աւոսը, Սև Յեմոն, Արա Յովսեփյանը, Արարու Ներկարարյանը: Նոյն 1992-ին, որին էլ տարօրինակ չէ, «3-րդ հարկը» հանդես եկավ մի նոր մասնիչներով, որը տղագրվեց «Գարուն» ամսագրում: Այն սուրագրեցին 17 արվեստագետ: Դա երևի վերջին հնարավորությունն էր, երբ Նկարչիների միությունը դեմք է ընդուներ նոր կանոնադրություն, և «3-րդ հարկը», հավատարին իր 1987-ի որուումներին, ձգում էր Նկարչիների միությունում եղած սեփականատերի համակարգը փոխարինել ստեղծագործական խմբավորումների համակարգը: Սակայն նոր ընդունված կանոնադրության մեջ մեր առաջարկությունները տեղ չգտան:

2008



Նույն 1992-ին Արարատ Սարգսյանի, Սարգիս Ջամալբաշյանի և Ռուբեն Գրիգորյանի նախաձեռնությամբ գերմանական Կասել քաղաքում, «Դոկումենտա Խ»-ին կից, կազմակերպվեց հայկական այլընտրանֆային արվեստի երկու ցուցահանդես: Դենց Կասել քաղաքում էլ որոշեցին այլևս չօպերունակել «3-րդ հարկ» խմբի գործունեությունը: Մի կողմից հեղափոխության ալիքի վրա բարձրացած տեղական «բուրժուազիան»՝ սովետական տարիներից բերված իրենց «ցեխավիկական գեղագիտությամբ», մյուս կողմից՝ կոնցեռտրուալիզմով ովառված արվեստագետներն իրենց բուռն ցանկությամբ ստեղծել այլընտրանֆային արվեստի նոր կենտրոններ՝ խիստ տարբերվող Նկարչների միությունից, իսկապես որ անհմաս էին դարձնում «3-րդ հարկի» հետագա գործունեությունը: Եվ 1993-ին մենք որոշեցինք հրաժեշտի մի ցուցահանդես կազմակերպել «3-րդ հարկ EX» անունով, համարենք, որ արվեստագետներից շատերը հեռացել կամ դատարանվում էին հեռանալ Հայաստանից: Անդրեասյան Կարենն իր ինստալացիայի մեջ օգտագործել էր «EX»-երով դաշված մեծ բանակությամբ բետոնե աղյուսներ, ժինարարի բանոն, մի յուկի կափարիչ և էլի տաք բաներ: Ըստ հեղինակի՝ եթե այդ յուկով մանես և ուղիղ ծակես-ամցնես երկրագումնոր, կարող են հայտնվել Լուս Անջելեսում: Առու-Առու և Գիծ Կարող (Մկրտչյան) ներկայացրել էին Զրիշնայի դիմանկարները և նման բաներ: Այդ ժամանակ Հայաստանում Զրիշնա գիտակցության կողմնակիցները հետաղնդվում էին, և «3-րդ հարկ» ցուցադրում էր իր հաճակրանքը նրանց նկատմամբ: «3-րդ հարկ EX»-ում ցուցադրվում էր Գագիկ Չարչյանի հսկայական (200x450սմ) «II M 51» վերնագործ դրող արտ ոճի դիմլունային աշխատանքը, որի համար նա գերազանց գնահատական էր ստացել ինսիտուտում: Ի դեմք, Գագիկ Չարչյանը տա ակտիվ էր ու նախաձեռնող, և նույն 1993-ին Նկարչների միությունում համարեց մի ցուցահանդես, որին մասնակցած երիտասարդները հետազոտում դեմք է դաշնային հայկական ժամանակակից արվեստում կարևոր դեր խաղացող արվեստագետներ:

1993-ին Նազարեթ Կարոյանը, դուրս գալով «Գոյակ»-ից, ամերիկահայ բանդակագործ Զարի Խաչատրյանի հետ հիմնել էր «EX-VOTO» անունով գալերեա: Նոյն թվականին Ամերիկյան համալսարանում կազմակերպել էին իրենց գալերեայի ճոխ ընորհանդես-ցուցադրությունը, որին հիմնականում մասնակցում էին «3-րդ հարկի» դրողարժաները: Դարձ է նույն, որ Նազարեթ Կարոյանը դեռ «Գոյակ»-ի ժամանակ արդեն հրաժարվել էր «3-րդ հարկի» ոչ ֆիգուրատիվիս արվեստագետներին ցուցադրելուց: «EX-VOTO»-ն ծրագրված էր իրև կոմերցիոն գալերեա:

Սակայն «3-րդ հարկ EX»-ը չէ, որ դարձավ մեր խմբի վերջին ցուցահանդեսը: 1993-94-ի ձմեռային մի ցուրտ երեկո են ու Նազարեթ Կարոյանը գրուցում էին հեռախոսով: Նա անդադար դժգոհում էր, որ արվեստի թիզնեսը առաջ չի գնում, որովհետև Հայաստանը հայտնվել է դատերազմի և տօքափակման մեջ: Ես տա լուրջ տոնով ասացի, որ մենք կարող ենք դատերազմը դադարեցնել, եթե կազմակերպենք «3-րդ հարկ Pacific» անունով ցուցահանդես: Զաջորդ օրը ես գնացի Նկարչների միության նախագահ Պողոս Հայթայանի մոտ և խնդրեցի 1994 թ. ցուցահանդեսային ցուցակի մեջ տեղ հատկացնել «3-րդ հարկին»: «3-րդ հարկ Pacific»-ը բացվեց 1994-ի ապրիլին: Ցուցահանդեսի ավարտից տաս օր հետո հայկական և ադրբեյջանական կողմերի միջև կմըվեց զինադադար, որը չի խախտվել մինչ օր:



ՍՈՆԱ ԱԲԳԱՐՅԱՆ

Ես շատ եմ տպավորվել սարսափ ժանրի ֆիլմերից, և մեր գյուղի մի քանի պատմություններից, որոնց մասին դեռ առիթ կունենամ գոելու։ Այս պատմությունը հիմնված է իրական դեպքերի վրա։



2008

proshyan poxoci vra gtel en txamardu glux
marminy gtel en hyusisayin poxotayum
qaxaqum amenic shat pox
en ashxatum
taxman byuronery



**bolory xosum en inch vor
urvakanis masin...**

banvorneri pndum en vor
erb sksum
en porel urvakany haytnvum e
nran tesnum en anbnak shen
keri patuhanneri mot kangnac
isk erbemn lsum en nra dzayny
urvakanis gorum e
erkar u anndhat
banvorneric mi qanisin tarel en
hogebujaran

banvorneri asum
en vor urvakany
haytnvum e nkuxnerum
kisaqand shenkeri
datark harkerum

**anushy
mtacum er
vor bolory
xelqnery
trcrel en**



**anushy korcrec inch vor
ban gtnelu huysy
na cher karoxanum qnel
amen or tarber lurer ein
haytnvum terterum**



anushy qaylum er poxocnerov
gtnelu hamar vorevice mi nshan
vor kogner sharunakelu
hetaqnnutyuny
bayc voch mi ardyung

**anushy haskacav vor
mardaspanin
chi tesni harcer chi ta
verj...**

**aravotyan anushy artnacav
glxacavov patuhanic durs
nayec poxocnery datark ein**

inchy karox er nran stipel
spanel aysqan txamardkanc?
inchu?incu aydgan dajan
dzevov?
ov e na? sarnasirt monstr?
te hogekan hivand?

**anushy sksec aveli shat
cxel qan araj**



**anushy voroshec
verjin
angam gnal
depqi vayr
na karcum er vor
khaskana gone
mardaspani mtqery
ev hankarc mi mitq
paylatakec nra glxum**


2008

#



120






Լուս է տեսել ինքնազիր մատենաւարի առաջին գիրը Եմիլ Սիորանի «Ծնված լինելու անհարմարության մասին»:

Թարգմանիչ՝ Նունե Աբրահամյան

Եմիլ Սիորանը (1911-1995) ոռումիևացի փիլիսոփա, եսաեիստ է, սկզբում գրել է ոռումիներեն, ապա՝ ֆրանսերեն:

Առաջարանում Մարկ Նշանյանը գրում է. « իր ամբողջ կյանքին ընթացքին չէ հոգևած գանազան առիթներով հավաքը առարկա և խնդրո առարկա դարձնելն, հավատալու իր անկարողությունը որպես նյութ ընծայելն, հավառացյալներու փառանցին սմեն տեսակի աղեղ ու նետ արձակելն, և այդ ընելով՝ կուռքեր ջախջախողի համբավ շահելն: Ի հարկե՝ դրական կամ ժառական համբավ, կափում ունի թե ո՞վ եր այդ մասին արտահայտվողը, բայց գարմանալիորեն կրնամ ըսել՝ ընտիանրապես դրական համբավ, հակառակ անոր որ ինչպես գիտենք՝ հավառացյալներու այդ փառանցը մարդկության (և կ'ենթադրեմ՝ առաջին մեկ օրեն՝ Սիորանի ընթերցողներուն) մեծագույն առկոսը կկազմեր ու կկացմե այսօր ավելի քան երբեք»:



ՀԱՏՎԱԾՆԵՐ ԳՐԻՒՑ

*
Ես կուզեի ազատ լինել, անզուղելիորեն ազատ: Ազատ, ինչպես մեռելածինը:

*

Դրախտն անտանելի էր, հակառակ դեղում, առաջին մարդը հարմարված կլիներ դրան: Այս աշխարհը դակաս անտանելի չէ, եթե ափսոսում ենի դրախտը կամ էլ՝ մեկ այլնի հույսն ենի փայփայում: Ի՞նչ անել: Ուր գնալ: Ոչինչ չանենք, ոչ մի տեղ էլ չգնանք դարձ ու հասարակ:

*

«Ամեն ինչ ցավ է»: Բուրդայական այս բանաձնի ավելի արդիականացված տարերակը կլիներ. «Ամեն ինչ ճշճավանջ է»:

Ու միանգամից, նիրվանան, կոչված լինելով վերջ դնել շատ ավելի լայնորեն տարածված տառապանին՝ մղճավանջներին, կդադարեր մի բանիսի համար նախատեսված դարման լինելուց ու կդառնար համընդիանութի սեփականությունը, ինչպես որ մղճավանջն ինքն է:



*
Ես ինձ չեմ ներում ծնված լինելուս համար: Ասես, աշխարհ ներթափանցելով, դղծած լինեմ խորհրդավոր մի բան, խախտած լինեմ շատ կարևոր մի դարտավորություն, անասելի ծանր սխալ գործած լինեմ: Բայց երբեմն դարահում է, որ դակաս կտրուկ լինեմ. ծնվելն այդժամ ինձ թվում է մի աղետ, որին անծանոթ մնացած լինելու համար ինս ինձ չէի ների:

*
Ավելի հարմար է առաջ գնալ արամերի, քան արժանիքների հետ: Արամերը, որ ի բնե հարմարվող են, օգնում են իրար, ներողամտությամբ են լցված մեկը մյուսի նկատմանը: Մինչդեռ արժանիքները խանդում են իրար, դայլարում իրար դեմ, իրար ոչնչացնում և ցույց են տալիս ամեն ինչում իրենց անհամատեղելիությունն ու անհանդուժողականությունը:

*
Գրական իմբնատիղության ոչ մի տեսակ այլս հնարավոր չէ, եթե չես չարչարում, փոփազնում լեզուն: Վիճակը լրիվ ուրիշ է, եթե նպատակն ընդամենը միտքն արտահայտելու է: Որովհետև այդ ոլորտում դահանջները չեն փոխվել նախասոկրացյաններից ի վեր:

*
Ավելի լավ է կենդանի լինել, քան մարդ, միջատ, քան կենդանի, բույս, քան միջատ և այսպես անվերջ:

Փրկությունը: Այն ամենը, ինչը թուլացնում է գիտակցության սիրառետությունն ու կասկածի տակ առնում նրա գերակայությունը:

*
«Ռուֆ սխալվել եք ինձ վրա հույս դնելով»:
Ո՞վ կարող է ննան բան ասել. Ասված և ձախողակ մարդը:

*
Ես սիրում եմ տասնութերորդ դարի հրեական այն աղանդը, որի անդամները քիստներություն էին ընդունում ստորանալու ցանկությունից դրդված, և դակաս չեմ սիրում Դարավային Ամերիկայի այն հնդկացուն, որը, քիստնյա դառնալով, ողբում էր, որ որդերի կեր է դառնալու, փոխանակ խժովեր իր երեխաների կողմից՝ դատիվ, որին կարծանանար, եթե ուրացած չլիներ իր ցեղի հավատալիքները:

*
Դիամնաղաղայում խորհուրդ է տրվում ազատագրման հասնելու համար թոթափել Բարու ու Զարի կրկնակի տղթան: Մենք հոգևոր իմաստով շատ հետամնաց ենք, որովհանանանք, թե Բարին արգել է: Ուրեմն երբեք չենք ազատագրվի:

*
Ինչ ուզում է ասենք, մեկ է՝ մահն ամենալավ միջոցն է, որ բնությունը գտել է բոլորին գրիացնելու համար: Մեզանից յուրաքանչյուրի հետ ամեն ինչ անհետանում է, ամեն ինչ հավերժ դադարում է: Ինչողիսի առավելություն, ինչողիսի չարաւահում: Առանց մեր կողմից նվազագույն իսկ ջանի, մենք սիրառետում ենք սիեզերին, նրան մեզ հետ տանում ենք դեռի մահ: Մեռնելն իրոք անբարոյական բան է:

*
Երբ երիտասարդ էի, իմ ամենամեծ հաճույքը թշնամիներ ստեղծելն էր: Յիմա, հենց

2008



մի թօնամի ունենամ, առաջին միտս նրա հետ հաշտվելն է, որդեսզի այլս սիդված չլինեմ նրանով զբաղվել: Թօնամիներ ունենալը մեծ դատասխանատվություն է: Ին թեռն ինձ հերիփ է, չեմ ուզում ուրիշներինն էլ կրել:

*

Աղագայի իմ տեսլականն այնքան ճշգրիտ է, որ եթե Երեխաներ ունենայի, տեղում կխեղդեի:

*

Ժողովուրդը խոր անկում է աղրում, դուրս է գալիս Շօջանառությունից այն դահից սկսած, երբ չի հավատում իր լեզվին, երբ դադարում է մտածել, որ իր լեզուն գերագույն արտահայտչամիջոցն է՝ լեզուն ինքը:

*

Ես, ծայրահեղ դեմքում, ինձ նեղություն կտայի Աչխարի վերջի համար, բայց ոչ՝ որևէ հեղափոխության... Աջակցել որևէ վախճանի կամ ծննդի, որևէ վերջնական կամ սկզբնական աղետի. այդ, բայց ոչ որևէ փոփոխության դեղի ավելի լավը կամ՝ ավելի վատը:

*

Չնայած իր ճերմակ մազերին, նա դեռ մարմնավաճառությամբ էր զբաղվում: Նրան հաճախ էի հանդիպում Թաղամասում գիշերվա Երեխի կողմերը և Երբեք տուն չէի գնում առանց նրանից որևէ դատմություն կամ անեկդոս լսելու: Ես մոռացել եմ անեկդոտներն ու դատմությունները, բայց լավ իիշում եմ, թե ինչո՞ւն մի գիշեր, երբ հոյսում էի բնած «ոջլուների» դեմ, նա, մատնեմատն արագ դեղի Երկինք ուղղելով, հարցեց. «Իսկ ի՞նչ կասե՞ ամենավերևի ոջլուի մասին»:

*

Դամոզմումներ ունի միայն նա, ով ոչնչում չի խորացել:

*

Եթե մարդկությունն այդքան սիրում է փրկիչներին՝ այդ մոլագարներին, որոնք անամոթաբար հավատում են իրենք իրենց, դատարուն այն է, որ մարդկությունը կարծում է, թե փրկիչներն իրեն են հավատում:

*


Եթե աղրած լինեի քիսունեության սկզբնավորման ժամանակներում, վախենամ, թե տեղի տայի քիսունեության հմային: Ես ատում եմ այդ համակրողին, այդ ենթադրյալ մոլեռանդին, ես ինձ չեմ ներում Երկու հազար տարի առաջվա այդ անդամակցության համար:

*

Այն, ինչ անվանում են ստեղծագործական բնազդ, ընդամենը մարդկային էությունից ժեղում է, այլասերում. մենք աշխարհ չենք Եկել նորացնելու կամ հուզելու, այլ՝ մեր գոյության դատարանից հաճույք ստանալու, դա ոչնչացնելու ու անաղմուկ անհետանալու համար:

*

Մարդկանց շատ ատելու օգուտն այն է, որ ի վերջո սկսում ես հանդուժել նրանց, երբ սղառվում է ատելությունդ:




*
Անտիկ ժամանակաւորականում ինքն իրեն ընչափեղք անելը շատ տարածված էր, հատկապես՝ փիլիսոփաների ւրախությամբ. մարդիկ իրենց շունչը դահում էին, մինչև նա- իր վրա հասներ: Ինքնաստան լինելու այնքան նրբագեղ ու նաև հարմար այս եղանակը լրիվ անհետացել է, և ոչ մի հույս չկա, թե մի օր հնարավոր կլինի դա վերականգնել:

*
Ամենածանր հանդիմանությունը, որ կարող ենք անել ուսիկանական վարչակարգ- երին այն է, որ մարդկանց դրդում են հանուն զգուշության ոչնչացնել նամակներն ու անձնական օրագրերը, այսինքն՝ այն ամենը, ինչ նվազ կեղծ է գրականության մեջ:

*
Ամեն անգամ, երբ որևէ ւրադարձի առաջ ես, ամենաճիշտը կլինի դառկել և թող- նել, որ ժամերը հոսեն: Ուժի վրա ընդունված որոշումները ոչինչ չարժեն. դրանք կամ գո- ռողությունից են թելադրված, կամ՝ վախից: Պառկած՝ դարձյալ զերծ չեն այս երկու աղետներից, բայց դրանք ավելի մեղմված են, ավելի՝ անժամանակային:

*
Մարդն անկասկած աղոթել սկսել է խոսելուց առաջ, որովհետև կենդանական վի- ճակը թողնելու, մերժելու ընթացքում իր աղրած հոգեվարի ցավերը չէր տանի առանց գոմոցների ու սնուցների, որ աղոթի նախատիրեն են, նրա նախանշանները:

*
Որքան իրավացի էին նախկինում, երբ օրն սկսում էին աղոթելով՝ օգնության կան- չով: Զիմանալով՝ ում դիմել, մենք մի օր կխոնարհվենք դատահած առաջին ցնորված աստվածության առաջ:




Համարը իրատարակվում է հոլանդական ճշակույթի և
զարգացման Պրինց Կլաուս ֆոնդի (Prince Claus Fund
for Culture and Development) աջակցությամբ:



The issue was published with the support of

Prince Claus Fund for
Culture and Development

Ինքնագիր #3.2008
Inknagir (autograph) #3



Լենինգրադյան 8, բն 62
Երևան 0038
հեռ. (+374 10) 39 54 19
www.inknagir.org
violetgrigoryan@gmail.com

© Ինքնագիր, 2008

ԼՈՒԽՆԵ ՎԱՅԱՉՅԱՆ
5-19. ՆԵԽՍԻ ԱԳԱԲ-
ՅԱՆ 20-22. ԿԱՐԱՆ
ԻՇԽԱՆՅԱՆ 23-37.
ԴԱՎԻԹ ԽԵՐԴՅԱՆ
38-39. ԳՐԻԳՈՐ ՊԼ-
ՏԵԱՆ 40-46.
ԿԻԼԻԿՅԱՆ 47-69.
ՆԱՐՍԻՆ ԶԱՍԱԼ 70-
72. ՅՈՒՐԻ ՄԱՆՎԵԼ-
ՅԱՆ 73-77. ՆԱԻՐԱ
ՓԻՐՈՒՅՆՅԱՆ 78-88.
ՏԻԳՐԱՆ ՊԱՍ-
ԿԵՎԻՉՅՅԱՆ 89-95.
ՇՈՒԾԱՆ ԹԱՄՐԱՁ-
ՅԱՆ 96-101. ԱՐԱ ՅՈՎ-
ՍԵՓՅԱՆ 103-105.
ՄԻՍԱՔ ԽՈՍՏԻԿՅԱՆ
106-107. ԱՐՄԱՆ ԳՐԻ-
**ԳՈՐՅԱՆ 108-117. ՍՈ-
ՆԱ ԱԲԳԱՐՅԱՆ 118-**
122. ԷՄԻԼ ՍԻՈՐԱՆ 123